Գիտաժողովի պատմությունից

2016թ. սեպտեմբերի 15-18-ը Ստեփանակերտում կայացել է **«Լեռնային Ղարաբաղի (Արցախի) Հանրապետության 25-ամյա պետականության ձեռքբերումներն ու արդի մարտահրավերները»** 1-ին միջազգային երիտասարդական գիտաժողովը, որին ներկա են գտնվել 77 մասնակիցներ 5 երկրներից, այդ թվում՝ պրոֆեսորներ Գերմանիայից, Լեհաստանից, Ռուսաստանի Դաշնությունից, Հայաստանից և Արցախից:

Գիտաժողովի մասին պատմող տեսանյութ՝ https://www.youtube.com/watch?v=3hofGaraBUw

2017թ. սեպտեմբերի 14-17-ը Ստեփանակերտում կայացել է **«Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման հիմնախնդիրներն ու հեռանկարները»** 2-րդ միջազգային երիտասարդական գիտաժողովը, որին ներկա են գտնվել 63 մասնակիցներ 7 երկրներից, այդ թվում՝ պրոֆեսորներ ԱՄՆ-ից, Գերմանիայից, Լեհաստանից, Ռուսաստանի Դաշնությունից, Ուկրաինայից, Հայաստանից և Արցախից:

Գիտաժողովի մասին պատմող տեսանյութ՝ https://www.youtube.com/watch?v=yecGAaX-EW8

2018թ. սեպտեմբերի 13-18-ը Ստեփանակերտում կայացել է **«Հայոց պետականության անցյալը, ներկան ու ապագան»** 3-րդ միջազգային երիտասարդական գիտաժողովը, որին մասնակցելու հայտ են ներկայացրել 105 մասնակիցներ 7 երկրներից՝ ԱՄՆ-ից, Բելառուսից, Գերմանիայից, Լեհաստանից, Ռուսաստանի Դաշնությունից, Հայաստանից և Արցախից: 67 մասնակիցների աշխատանքները տպագրվել է ՀՀ ԲՈԿ-ի ընդունելի հանդեսների ցանկում ընդգրկված **«Գիտական Արցախ»** պարբերականում:

Գիտաժողովի մասին պատմող տեսանյութ՝ https://www.youtube.com/watch?v=JjERePlSV44

Գիտաժողովի մասին կարող եք ծանոթանալ նաև Կազմակերպության www.aegmm.org կայքի «Հայտարարություններ» բաժնում կամ www.artsakhlib.am կայքի «Գիտակրթական նորություններ» բաժնում: